ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

Եղեգնաձոր համայնք, ք. Եղեգնաձոր **10 փետրվարի 2023թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Ռոմիկ Վարդանյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հրաչյա Վարդանյանը, օգնական՝ Գառնիկ Խաչատրյանը, Գլաձոր բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Օրդոյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Երվանդ Գալստյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետներ Քրիստինե Պողոսյանը և Անի Հասրաթյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հերթական նստաշրջանի՝ փետրվարի 10-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 10-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

4) Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու և աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարի կիրառման կարգը և չափերը հաստատելու մասին:

5) Եղեգնաձոր բնակավայրի Մաշտոցի փողոցում կառուցված գազատարը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

6) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող GAZ KO-503B (GAZ-53-12) տրանսպորտային միջոցը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

7) Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:

8) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

9) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

10) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 5-ի թիվ 13 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

11) Սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) հողատարածքներ տրամադրելու և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 118-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

12) Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերից պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրելու մասին:

13) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 155-Ա որոշման 2-րդ հավելվածում փոփոխություն կատարելու մասին:

14) Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքի գործառնական նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

15) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Լսեցին.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից՝ հատկացնել դրամական օգնություն՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի,
2) Գլաձոր բնակավայրի բնակիչ Արթուր Սերյոժայի Բաղալյանին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,
3) Գլաձոր բնակավայրի բնակիչ Արմեն Հենրիկի Նազարյանին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4726 /հուղարկավորության նպաստներ բյուջեից/ հոդվածից՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել Արմանուշ Տիգրանի Խաչատրյանի ընտանիքին /Գետափ բնակավայր/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ա/

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ մասերի և «Համայնքային ծառայության մասին» 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջներով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու և աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16-Լ/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների՝ **ավագանին որոշեց.**

1. Բնական գազի մատակարարման ծառայությունների մատուցման, արդյունավետ շահագործման և պահպանման նպատակով՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Մ. Մաշտոցի փողոցում կառուցված գազատարը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11012023-10-0026, հասցեն՝ Մ. Մաշտոցի 30/1) 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Վայոց ձորի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղին (Վայոց ձորի ԳԳՄ):

2. Առաջարկել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ Վայոց ձորի ԳԳՄ-ի հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17-Ա/

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ GAZ KO-503B (GAZ-53-12) ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող GAZ KO-503B (GAZ-53-12) տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 16XX925306, հաշվառման համարանիշ՝ 855CM61) 2 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին՝ Եղեգնաձոր համայնքում՝ իր իրավասությունների շրջանակներում նշված տրանսպորտային միջոցով ծառայություններ մատուցելու նպատակով:

2. Առաջարկել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքել փոխադրամիջոցի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին.
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի

պահանջներով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների և հիմք ընդունելով քաղաքացի Ազատ Համբարձումյանի դիմումը՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մշակույթի տան սենյակներից մեկը անհատույց օգտագործման իրավունքով, 5 տարի ժամկետով, տրամադրել քաղաքացի Ազատ Համբարձումյանին՝ համայնքի երեխաների համար դիոլի պարապմունքներ անցկացնելու նպատակով:

2. Առաջարկել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Ազատ Համբարձումյանի հետ կնքել անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 11-ի N 1730-Ն որոշումը՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.62660 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-001-0308-0018/ և 0.33643 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-001-0308-0019/ մակերեսներով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող, հողատեսքերը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայասատանի Հանրապետության էկոնոմիայի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 1667-Ն հրամանը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշման հավելվածի 4-րդ կետը և քննարկելով քաղաքացի Համլետ Սարգսյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե g**.

1. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Համլետ Վանուշի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության 0.282 հա վարելահողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքներիի պետական գրանցման վկայական N 11012023-10-0033, կադաստրային ծածկագիր՝ 10-042-0158-0044) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատարածք՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն հիմնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի ԹԻՎ 13 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե g**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 5-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող 0.0155 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին» թիվ 13 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Լսեցին.

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 118-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-211 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով և քննարկելով «Դուստր Սոլար», «Սուն Սոլար» ՍՊ ընկերությունների տնօրեն Կ. Մինասյանի, «Արմ Սոլար» ՍՊ ընկերության տնօրեն Տ. Մանուկյանի, «Այ Սոլար» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Դավթյանի կողմից ներկայացված դիմումները՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 0.42672 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0217-0049/, 1.06967 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0218-0317/, 1.51921 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0223-0332/, 0.73531 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0225-0818/, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 1.04288 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0899/, 0.49776 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0902/, 1.93324 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0906/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հող, 0.05728 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0902/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, հողերը 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ տրամադրել «Դուստր Սոլար» ՍՊ ընկերությանը՝ հենասյունների տեղադրման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման նպատակով:

2. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 0.36755 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0217-0050/, 0.73146 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0225-0821/, 1.00602 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0218-0320/, 1.58996 հա /կադաստրային

ծածկագիր՝ 10-032-0223-0333/, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 1.88839 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0907/, 1.04552 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0901/, 0.56696 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0905/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հող, հողերը 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ տրամադրել «Սուն Սոլար» ՍՊ ընկերությանը՝ հենասյունների տեղադրման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման նպատակով:

3. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 0.3673 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0217-0052/, 0.70784 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0225-0820/, 1.137693 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0218-0319/, 1.57788 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0223-0334/, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 2.10834 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0904/, 1.07813 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0898/, 0.56636 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0900/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հող, հողերը 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ տրամադրել «Արմ Սոլար» ՍՊ ընկերությանը՝ հենասյունների տեղադրման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման նպատակով:

4. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 0.36324 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0217-0051/, 0.82855 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0225-0819/, 1.03895 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0218-0318/, 1.44675 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0223-0331/, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 1.82729 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0909/, 0.65973 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0903/, 0.85561 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0897/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հող, հողերը 25 /քսանհինգ/ տարի ժամկետով,սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ տրամադրել «Այ Սոլար» ՍՊ ընկերությանը՝ հենասյունների տեղադրման և էլեկտրահաղորդման լարերի անցկացման նպատակով:

5. Առաջարկել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-4 կետերում նշված կազմակերպությունների հետ,օրենսդրությամբ սահմանված կարգով,կնքել սերվիտուտի պայմանագրեր՝ 25 /քսանհինգ/ տարի ժամկետով՝ յուրաքանչյուրը 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ տարեկան վճարով: Պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը թողնել համապատասխան կազմակերպությունների վրա:

6. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի՝ «Սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) հողատարածքներ տրամադրելու մասին» թիվ 118-Ա որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ ՊԱՐԶ ԳՐԱՎՈՐ ՁԵՎՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՌ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշումը և քննարկելով քաղաքացի Արտակ Աղաջանյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից 400 հա, 3 (երեք) ամիս ժամկետով, պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրել քաղաքացի Արտակ Աղաջանյանին՝ մանր եղջերավոր անասուններին արածեցնելու նպատակով:

2. Սույն որոշման առաջին կետում նշված արոտավայրերի վարձակալության վարձավճար սահմանել 120 000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ՝ երեք ամսվա համար:

3. Առաջարկել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Արտակ Աղաջանյանի հետ կնքել արոտավայրերից օգտվելու վարձակալության պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 155-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի՝ «2023 թվականի համար Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 155-Ա որոշման 2-րդ հավելվածի աղյուսակի 42-րդ կետում «Սպորտի կազմակերպիչ /Վերնաշեն/» բառերը փոխարինել «Պարուսույց /Գետափ, Վերնաշեն/» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և այն հանգամանքը, որ նշված հողատեսքը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ համաձայնություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 4.0132 հա մակերեսով հողատեսքի /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0276-0019/, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել 2023 թվականի մարտի 17-ին, ժամը 18:00-ին՝ Գլաձոր բնակավայրի մշակույթի տան կոնֆերանս դահլիճում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱՐՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ _____

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ _____

ՄԱՐԱՏ ՇԱՀԲԱԶՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիպտն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____